7548

Чуп- Зпр-4
1909

389.14
U-15

2010

9.141
Ս - 15

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԻՒ-ԵՕՐՔ

1909

Տպարան «Երիտասարդ Հայաստան»ի

41309-ա.
300 ար
1599-ՍԱ
399.14
Ա-15
15
2001
1003
23763-60

ՆԱԽԱԲԱՆ

Հայ ցեղը կը բոլորէ ահա երեսուն տարուան շրջան մը ահաւոր դէպքերով արկածալից։ Մեր բաղը օտարաց միջամըտութեան շնորհիւ բարւոքելու ջանքերը անհուն դժբախտութեանց փոթորիկներ յարուցին, որք տակաւին խպառ դադարած չեն մնացեալ։ Ներսէսի հանճարը, Խրիմեանի խանդը, հայրենասէր երիտասարդաց հերոսական ոգորումներն և հարիւր հազար զոհերու արիւնը չզօրեցին սխալ հաշիւներով սկսուած շարժումը յաջող ելքի մը յանգեալ տալ։

Բռնապետական ռէժիմին ամենէն խժդժական հարուածներուն մենք զմեզ նշաւակ ըրած ըլլալէ վերջ՝ Սահմանադրական նորահաստատ ռէժիմին տակ ալ լրջութենէ մեծապէս թերացանք։

Ազերասան հրապարակախօսներ փցուն յաւակնոտութիւններու համաճարակ մը սփռեցին ամէն ուրեք։ Հերոսութեան տենչով տոչորողներ աղուոր բայց ցնորամիտ խօսքեր բարբառեցան և ոմանք տղայական խիզախ շահատակութիւններու զլուխ անցան, որով միջայեղային յարաբերութիւնները ձգտեցին և սրբամըտութիւններ զրգռեցին յումպէտս։ Չկայ աշխարհի վրայ ուրիշ ազգ մը, որ դատարկ խօսքերու և անպատեհ ցոյցերու երեսէն այնքան տառապած ու ջարդուած ըլլայ որքան մեր։

Այս վշտալի իրողութիւններուն վրայ ուշադրութիւն հրաւիրող հայրենասէրներ չպակսեցան, բայց ժողովուրդի զանգուածը ախտաւոր ախորժակով մը շարունակեց ցնորքի և ունայնամտութեան բաժակէն ըմպել և ընդարմանալ, առանց նշմարելու թէ իր կարդացած թերթին բանտարկեալն էր և թէ նորօրինակ բռնապետութեան մը շղթաները կը կրէր։ Մխիթարութիւնն ունինք այժմ ողջունելու Հայ ժողովուրդին զարթումը։ Անիկա, հակակրօնական պայքարին առթիւ, իր ամենէն նուիրական զգացումներուն մէջ վիրաւորուած, և ի տես իր ամենէն պաշտելի ազգային ժառանգութեանց վտանգումին՝ խորապէս ցնցուած, իր աչքերը կը դարձնէ դէպ ի փրկութեան և յառաջդիմութեան վստահելի ուղին։

Մեր ժողովուրդին այս աւելի գիտակից կեցուածքը հանդէպ իրականութեանց՝ մեզի համար ամենէն մխիթարական երեւոյթն է, որ վհատեալներուն իսկ սիրտ տալու և զանոնք ալ գործունէութեան մղելու ընոյթն ունի։ Ժամանակը յոյժ բարեդէպ

է և պարտաւորութիւն կը դնէ բոլոր յառաջդիմասէր հայրենակիցներու վրայ ազգաշէն և լուսաւորիչ միութիւն մը կազմաւորելու. միութիւն մը որ, զերծ քաղաքական կարգի նախագաղութներէ, ուղղութիւն և թափ տայ ազգային կրթական և բարոյական յառաջդիմութեան ընթացքին։

Այս նկատողութիւններն են, որ դմեզ մղեցին իրականացնել ինչ որ մեր և ուրիշ խիստ շատերու փափաքն էր տարիներէ իվեր, և հիմնարկել ներկայ «ՀԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ»։

Եւ որպէս զի մեզի միանալ ուզողները յստակ գաղափար մը ունենան այս ընկերութեան ոգւոյն և ընդհանուր ձգտումներուն վրայ, հետևեալ երեք կէտերը կը ներկայացնենք անոնց։

1.—ՄԵՆՔ ԿԸ ՀԱՒԱՏԱՆՔ ԵՒ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԻՆՔ ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ։

Ազատական կամ Սահմանադրական Թուրքերը, հակառակ իրենց գործած խոշոր սխալներուն և ինչ ինչ նեղմտութիւններուն, արժանի են մեր համակրանաց, վասնզի անոնք մեծ ու խոստմնալից գործ մ'ըրին սահմանադրականի վերածելով բացարձակ մենպետութիւնը։ Մենք լաւատես հայեացք մ'ունինք Թուրքիոյ ապագային համար։ «Երիտասարդ Թուրքերը» զգայուն և ուշադիր են Եւրոպական կարծեաց և անոնց ընթացքը տակաւառ տակաւ աւելի պիտի ազդուի Արևմուտքի բարոյական ճնշումէն։ Թուրքիոյ մէջ Մամուլին վայելած ներկայ ազատութիւնը անգնահատելի բարիք մ'է, եթէ միայն գիտնանք զայն իմաստնօրէն գործածել՝ ստեղծելու ողջամիտ հանրային կարծիք մը և կամաց կամաց հանրային շահերը համերաշխ հոգածութեան ենթարկելու։

Ուրեմն մենք կ'ուզենք Արևմտեան բարոյական ազդեցութեան հզօրացումը մեր հայրենիքին մէջ, բայց ոչ թէ մեծ պետութեանց մուտքն ու պաշտօնական թևարկութիւնը անոր ո և է մասին վրայ։ Մենք Օսմանեան պետութեան անխոռ պահպանմանը կուսակից ենք։ Գերմանիոյ նման մեծ ազգերը կրնան իրենց թևարկութեան ենթարկեալ Օսմ. գաւառները միլիոնաւորներու գաղթային հոսանքովը ողողել և դմեզ ու մեր Թուրք և Ասորի դրացիներն ընկղմել։ Ուրեմն մեր՝ իբրև Հայ և իբրև Օսմանցի՝ շահերը կը պահանջեն որ մեր Թուրք հայրենակիցներուն հետ իմաստուն գործակցութեամբ վերաշինենք Օսմ. հայրենիքը։

2.—ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՏԷԱԼԸ ՈՉ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ Է։

Մենք «ազատ ու անկախ Հայաստան» մը կազմաւորելու երեւակայական իտէալին չենք ձգտիր։ Օսմանցիութեան յայնարձակ ասպարէզը աւելի համապատասխան է մեր ցեղին բարձրաթռիչ ձիրքերուն քան հայկական նահանգի մը երկբայական կազմութիւնը։

Օսմանեան Երեսփոխանի, կառավարիչի, նահարարի պաշտօնները Հայուն ևս քաղաքական փառասիրութեանց և կարելիութեանցը սահմանին մէջ են այժմ շնորհիւ սահմանադրական ռէժիմին, եւ մեզ կը մնայ մեր զաւակները կրթել և գերազանցօրէն արժանի ընել այդ բարձր պաշտօններուն։ Բայց քաղաքական ոլորտէն դուրս ուրիշ շատ կոչումներ կան ոչ նուազ պատուական ու բաղձալի, որոնց նախանձաւոր ըլլալ պարտինք։ Նոյն իսկ պարկեշտ վաճառական, ճարտար արհեստաւոր և յառաջադէմ երկրագործ ըլլալն ալ ցանկալի կեցութիւն է և հայրենասէր գործունէութիւն։

3.—ՊԻՏԻ ՆԱԽԱՆՁԱՒՈՐ ԸԼԼԱՆՔ ՄԵՐ ՅԵՂԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ։

Մենք կը հաւատանք՝ թէ Հայը մեծ ազգ մ'է եղած անցեալին մէջ, ոչ քաղաքական այլ բարոյական տեսակէտով։ Անիկա ապագային մէջ ալ մեծ պիտի ըլլայ՝ ոչ քաղաքական զօրութեամբ այլ բարոյապէս։ Մենք այն հաւատքն ունինք թէ Հայ հոգին ազնիւ և բարձրագոյն տարրեր պիտի ընծայէ մարդկային խորհուրդին և բարոյականին։ Ուրեմն մենք բոլոր սրտի փարած պիտի մնանք մեր մեծ ու հրաշակերտ լեզուին, մեր քրիստոնէական վեհ կրօնին, մեր ազգային նուիրական եկեղեցւոյն, մեր ընտանեկան ու ցեղային ընտիր ու պատուական աւանդութեանցը։ Եւ զայս պիտի ընենք ոչ կոյր ու այլամերժ մոլեռանդութեամբ կամ նորատեաց աւանդամոլութեամբ, այլ յառաջդիմական ազատ ոգւով, այսինքն մեր ցեղին բոլոր ընտիր ժառանգութիւններն աւելի ևս ազնուացնելու և կատարելագործելու զգուշաւոր և իմաստասիրական զգօնութեամբ։

Այս իտէալը հարկ կը դնէ մեր վրայ որ աշխատինք մեր նոր սերունդին տալ դաստիարակութիւն մը ճշմարտապէս մարդկային, ճշմարտապէս հայկական և ճշմարտապէս օսմանեան։ Կրթական դրութիւն մը որ այս երեք ստորոգելիները չի միացներ, չէ մեզի համար օգտակար և իրապէս փրկաւէտ։

Ահա այս երեք սկզբունքներն բաւական կը պարզեն մեր ազգային քաղաքականութեան ոգին։ Կը շեշտենք այն կէտը՝ թէ հակառակ բոլոր այն անցքերուն և երևոյթներուն, որոնք մեր

լաւատեսութիւնը մերթ ընդ մերթ չարաչար մռայլեցին, մենք անդրադարձեալ և հիմնաւոր յոյսը կը տածենք թէ փոխադարձ թիւրիմացութեանց և անփորձութեան արդիւնք եղող շփումները տակաւ պիտի դադարին և ղէպքերու ընդհանուր ընթացքը ղէպ ի լաւ անդր պիտի յառաջանայ աւելի արագ։ Վստահ ենք որ եթէ մեր առաջնորդներուն և մտաւորական ընտրանիին կողմէ արիասիրտ ջանքերը շարունակուին, քիչ առնէն Հայ և Թուրք յարաբերութիւնք աւելի սիրալիր և հաստատուն հանգամանք մը պիտի առնեն և մեր երիտասարդ Թուրք հայրենասէրներն ևս պիտի համոզուին թէ Օսմանեան կայսրութեան բաղկացուցիչ տարրերը տրուած ըլլալով, քաղաքակրթական ուռած արուեստին գործը պիտի ըլլայ զանոնք ոչ թէ միատարր ընելու ձգտիլ, ինչ որ անկարելի է, այլ լծել ամէնքը Օսմանեան քաղաքակրթութեան փառաւոր կառքին, ինչպէս ամենաբարին Նստուածոյ գործն է եղած հրաշակերտ բնութիւնը՝ «Ի չհամազգեսց լծեալ այս կառք զարմանալիք։» Չհամազգի ցեղերու ներկայութիւնը պիտի ըլլայ ոչ թէ վտանգը այլ պայմանը Օսմանեան գերազանց քաղաքակրթութեան և հզօր զօրութեան։ Ասիկա է ճշմարտութիւնը, զոր անշուշտ մեր Թուրք հայրենակիցները պիտի հասկնան և ի գործ դնեն։

Հաւատը ունենանք ճշմարտութեան ուժին վրայ, յարած մընանք մեր հայրենիքին և նկրտինք անձնուէր և լմաստուն կերպով ճշմարտութիւնը ծաւալել և հայրենիքը շինել։ Ասիկա յաջողրէն ընելու համար հարկ է միաբան և համակիր աշխատակցութիւն։ Եւ ահա այս նպատակին համար է որ հիմնարկելով ներկայ Հայ Ցառաջդիմական Ընկերակցութիւնը, մեր այս սիրալիր կոչը կ'ուղղենք մեր բոլոր մտաւոր և հեռաւոր համախոհներուն փութով գալ մեզ յանդամակցութիւն։

Փութանք, այո՛, և գործենք միաբան ու համաշունչ։ Գործենք համեստ, նախատես և համբերատար ջանքերով, հետամուտ ըլլալով ոչ խաբուսիկ երևոյթներու, այլ իրական բարեաց և հիմնաւոր զարգացման։

22 Հոկտեմբեր 1909

Նիւ Եօրք, 412 West 23rd St.

ՀԻՄՆԱԴԻՐՔ ՀԱՅ ՑԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ
Ց. Մ. ՏԱՏՈՒՐԵԱՆ
Վ. ԳԱՐՏԱՇԵԱՆ
Ա. ԱՑՎԱԶԵԱՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՑԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՑՕԴՈՒԱԾ Ա.
ԱՆՈՒՆ

Այս կազմակերպութեան անունն է ՀԱՅ ՑԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ։

ՑՕԴ. Բ.
ՆՊԱՏԱԿ

Այս ընկերակցութեան նպատակն է ընկերական ոգի արծարծել և ճշմարիտ քաղաքացիութեան պարտքերուն նկատմամբ ողջամիտ ըմբռնումներ մշակել Հայոց մէջ, և յօգուտ անոնց տընտեսական և ընկերային զարգացմանն ու բարօրութեանը աշխատիլ։

ՑՕԴ. Գ.
ՊԱՇՏՕՆԵԱՅՔ

1—Այս ընկերակցութեան պաշտօնեաներն պիտի ըլլան, — Նախագահ մը, դեր-նախագահ մը, քարտուղար մը, և գանձապետ մը, որոնք պիտի ընտրուին երեք տարին անգամ մը։

2.—Նախագահը ընկերակցութեան ժողովներուն պիտի նախագահէ։

3.—Դեր-նախագահը, ի բացակայութեան նախագահին, պիտի վարէ անոր պաշտօնը։

4.—Քարտուղարը իւրաքանչիւր ժողովի ճիշդ արձանագրութիւնը պիտի ընէ, պիտի կարդայ զայն յաջորդ ժողովին մէջ, և պատրաստ պիտի գտնուի, ի պահանջել հարկին, կարդալ արձանագրութիւնը ո և է գործի որ կատարուած ըլլայ ինչ և է նախորդ նիստի մէջ։ Նաև իւրաքանչիւր անդամի ընկերութեանս հետ ունեցած հաշիւները պիտի պահէ, ինչպէս նաև ուրիշ

հաշիւներ զորս ընկերութիւնս կրնայ ունենալ ո և է անձի կամ անձանց հետ։ Ինչպէս նաև Գանձապետին հետ։ Պիտի գանձէ և Գանձապետին յանձնէ բոլոր տուրքերն և եկամուտները։ Գանձապետին կողմէ վճարուելու բոլոր մուրհակներն պիտի պատրաստէ, և թէ ինքը և թէ Նախագահը պիտի ստորագրեն զանոնք։

5.—Գանձապետը քարտուղարէն պիտի ընդունի Ընկերակցութեանս բոլոր դրամներն, և վճարումները պիտի ընէ Քարտուղարին և Նախագահին կողմէ ստորագրուած մուրհակներու վրայ։ Տարեկան տեղեկագիր մը ընկերութեան պիտի ներկայացնէ իր ձեռքէն անցած բոլոր դրամներուն համար, և տեբեկագիրը պիտի ճշմարտուի Քարտուղարին հաշիւներով։

ՅՕԴ. Դ.

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

1.—Ընկերութեան պաշտօնեաներն (Նախագահ, Դեր. Նախագահ, Քարտուղար, Գանձապետ) և ուրիշ անդամ մը, որ պիտի ընտրուի երեք տարին անգամ մը, պիտի բաղկացնեն Գործադիր Ժողովը, որ Ընկերակցութեան գործերը պիտի վարէ։

2.—Գործադիր Ժողովը ընտրելեաց եռամսեայ ցանկ մը պիտի պատրաստէ, որուն վրայ Ընդհանուր Ժողովը քուէարկելով պիտի կատարէ իր եռամեայ ընտրութիւնները։

3.—Եթէ հրաժարման, մահուան կամ այլ պատճառաւ պաշտօնեայ մը, կամ Գործադիր Ժողովոյ անդամ մը պակսի, Գործադիր Ժողովը առժամապէս ուրիշ մը պիտի ընտրէ անոր տեղը լեցնելու մինչև յաջորդ տարեկան Ժողովին, երբ Ընկերակցութիւնը մասնաւոր ընտրութիւն մը պիտի կատարէ եռամեայ շրջանին մնացորդ մասին համար։

ՅՕԴ. Ե.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1.—Ընկերակցութիւնս երեք կարգի անդամներ պիտի ունենայ —Գործօն, Օժանդակ, և Պատուոյ։

2.—Օժանդակ անդամները Գործօն անդամոց բոլոր իրաւունքները պիտի ունենան, բացի քուէարկելու և պաշտօնավարելու իրաւունքներէն։

3.—Պատուոյ անդամ կրնայ ընտրուիլ Ընկերակցութեանս քուէովը ո և է անձ, առանց կրօնի կամ ազգայնութեան խտրութեան

4.—Բարեհամբաւ ո և է անձ, այր թէ կին, որ 21 տարին բոլորած է կրնայ Ընկերակցութեանս անդամ ընտրուիլ։

5.—Ոչ ոք այս Ընկերակցութեան անդամ պիտի կրնայ ընտրուիլ առանց ընտրելին անունն ու յարմարութիւններն երկու Գործօն անդամոց կողմէ նախապէս Գործադիր Ժողովին յանձնարարուած ըլլալու դրաւորապէտ։

6.—Տարեկան անդամավճարը Գործօն անդամոց համար հինգ տոլար, Օժանդակ անդամոց համար երկու տոլար պիտի ըլլայ։

ՅՕԴ. Զ

ԱՐՏԱՔՍՈՒՄՆ ԱՆԴԱՄՈՅ

Անդամ մը, որ Ընկերակցութեանս սկզբունքներուն հակառակ և շահերուն վնասակար ընթացքի մէջ գտնուի, պիտի կրնայ պաշտօնանկ ըլլալ կամ Ընկերակցութեանս ծոցէն արտաքսուիլ անդամոց երկու երրորդին քուէովը ո և է Ժողովի մէջ, պայմանաւ որ խնդիրը նախապէս Գործադիր Ժողովոյ կողմէ քննուած և ամբաստանեալ անդամը ինքզինք պաշտպանելու պատեհութիւնը ունեցած ըլլայ։

ՅՕԴ. Է.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ընկերակցութեանս Ընդհանուր Ժողովը տարին անգամ մը տեղի պիտի ունենայ։ Գործադիր Ժողովոյ որոշմամբ կրնայ ի պահանջել հարկին, արտակարգ ընդհանուր Ժողով գումարուիլ։

ՅՕԴ. Ը.

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

1.—Գործադիր Ժողովը իշխանութիւն ունի այս Ընկերակցութեան մասնաճիւղեր կազմելու արտօնել ո և է տեղւոյ անդամները, Ընկերակցութեանս նպատակին յաջողութեանը ազդուապէս աշխատելու համար։ Գործադիր Ժողովը այդպիսի արտօնութիւն մը յետս կոչելու իշխանութիւնն ևս ունի։

2.—Մասնաճիւղի մը անդամ ընտրելու համար, նոյն ճիւղին Դիւանը պարտի նախապէս ընտրելոյն անունն ու յարմարութիւնները հաղորդել Ընկերակցութեանս Գործադիր Ժողովոյն՝ ի հաւանութիւն։

ՑՕԴ. Թ.

ԵԿԱՄՈՒՏ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

1.—Ընկերակցութեանս բոլոր եկամուտներուն 25 առ հարիւրն պիտի կազմէ Պահեստի Դրամագլուխը, մինչև որ քսան և հինգ հազար տոլարի հասնի գումարը, զոր պիտի կարենայ Գործադիր ժողովը յատկացնել Ընկերակցութեանս նպատակին ծառայելու ընդունակ ձեռնարկի մը։

2.—Ընկերակցութեանս յանձնուած նուէրներու և կտակներու դրամը պիտի կիրարկուի այն մասնաւոր նպատակին, որուն նուիրատուն կամ կտակատարը յատկացուցած ըլլայ զայն։

ՑՕԴ. Ժ.

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Ընկերակցութեանս նպատակն անփոփոխելի ըլլալով, Սահմանադրութեան մանրամասնութիւններն կրնան բարեփոխուիլ ոև է ժողովի մը մէջ՝ ներկայ քուէատու անդամոց երկու երրորդն քուէովը, պայմանաւ որ Ընդհանուր ժողովոյ գումարումէն առ նուազն 3 ամիս առաջ բարեփոխումը հաղորդուած ըլլայ Գործադիր ժողովին։

ՄԵՏԱՍԱՆ-ՀԱՅԵՐԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2013
<< Ազգային գրադարան
NL0049898